բիա), Ֆրատ (Եփրատ) գետի հովտով Դումլու լեռների լանջերով, հասնում է Զինագորի հովիտը–Թորթումի գաւառում, այնպէս է փոխուում օդը, բոյրը, շրջապատի բուսականութիւնը, որ անցորդը զգում է կենցաղի փոփոխութիւնը: Ոչ միայն բուսականութիւնը, այլ նոյն իսկ կենդանիները իրենց գոյնով, հասակով, կայտառ շարժումներով նորանոր տեսարաններ են կազմում անծանօթ աչքերին: Աւելի առաջ երթալով՝ Սողանլու–չոճի, եղեւնի անտառին փոխարինում են պտղատու պարտէզների ծառերը. կեռասի, բալի, հոնի, նռի, ընկոյզի, տանձի: Ամէն քայլափոխի պատահած աղբիւրները, առուները, ճահիճներն ու լճակները այնպիսի զմրուխտի գալարով են գրաւում, հրապուրում ճանապարհորդի աչքերը, որ նա ոգեւորուած, յափշտակուած արտասովոր պատկերներով՝ ձգտում է անվերջ առաջ գնալ այդ առասպելական աշխարհը, վիթխարի ձորերը, սահելով, ցատկըրտելով լեռների լանջերի կածաններով, առանց սոսկալու խոր անդունդներից եւ ահեղագոչ առուակներից: Ճորոխի Աւաղանում այլ եւս չէք տեսնել ռանչպարի եօթլծանի — եզ ու դոմէշ — զուխանը. չէք լսել հոտաղի հորովելը. աջ ու ձախ մի–մի լծով չթուորներ, կամ բահ ու փետատով ճանգրտում են լերան լանջերը, ապառաժի վրայ նստած երեք մատ հողը, որ ցանեն